# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 86 - Լ

**ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետին:
3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ էլեկտրոնային հսկողության միջոցների վերաբերյալ դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

***Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 12.12.2024թ.***

***Ա. ՍԱՐԳՍՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի

« 12 » դեկտեմբերի 2024թ.

Թիվ 86 -Լ հրամանի

# ԿԱՐԳ

# ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումներով կիրառված համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացման ընթացակարգը:

2. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազորություն ունեցող ծառայողների (այսուհետ՝ իրավասու ծառայող) կողմից:

3. Իրավասու ծառայողների կողմից հսկողությունն իրականացվում է՝

1) ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց այցելություններ կատարելու միջոցով՝ անհետաձգելի միջամտության ու պաշտպանական որոշումների պահանջների խախտումների վերաբերյալ տեղեկություններն արձանագրելու եղանակով.

2) իրավասու պետական մարմիններին հարցումներ ներկայացնելու միջոցով.

3) էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի N 1986-Ն որոշման պահանջների համաձայն:

## 2. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

4. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնելու նպատակով իրավասու ծառայողն անհետաձգելի միջամտության որոշման կայացման կամ պաշտպանական որոշման պատճենը ստանալու օրվանից հետո հինգ օրվա ընթացքում այցելում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի փաստացի գտնվելու վայր և կազմում է արձանագրություն, որում նշվում են՝

1) այցելության օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) իրավասու ծառայողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը.

3) ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

4) հակիրճ տեղեկատվություն այցելության ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի ներկայացրած տեղեկատվության, այդ թվում՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման պահանջների կատարման վերաբերյալ:

5. Արձանագրությունը ստորագրում են իրավասու ծառայողը և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը: Վերջինիս կողմից ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ կատարվում է նշում ստորագրելուց հրաժարվելու և դրա պատճառների մասին:

6. Բացառությամբ սույն կարգի 8-9-րդ կետերով նախատեսված դեպքերի՝ հսկողությունն իրականացվում է պարբերական այցելությունների միջոցով, որոնք պետք է կատարվեն՝

1) անհետաձգելի միջամտության որոշման դեպքում՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ.

2) պաշտպանական որոշման դեպքում՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

7.Պարբերական այցելությունների արդյունքում կազմվում են արձանագրություններ՝ սույն կարգի 4-5-րդ կետերի համաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ այցելության արդյունքում արձանագրվում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի կողմից անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման համապատասխան պահանջների խախտում, ինչի դեպքում կազմվում է խախտման վերաբերյալ արձանագրություն՝ սույն կարգի 12-րդ կետի համաձայն:

8. Այն դեպքում, եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառվել են միայն Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ և 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-3-րդ և 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումներից մեկը կամ մի քանիսը, և իրավասու ծառայողի կողմից կիրառվել են էլեկտրոնային

հսկողության միջոցներ, ապա սույն կարգի 6-րդ կետով նախատեսված պարբերական այցելությունները չեն իրականացվում:

9. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված պարբերական այցելությունները չեն իրականացվում նաև այն դեպքում, երբ պաշտպանական որոշմամբ կիրառվել են միայն Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով նախատեսված սահմանափակումներից մեկը կամ մի քանիսը: Նշված սահմանափակումների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով իրավասու ծառայողը հարցմամբ դիմում է՝

1) Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով նախատեսված սահմանափակման համար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն.

2) Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետով նախատեսված սահմանափակման համար՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

10. Այն դեպքում, եթե անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշմամբ կիրառված սահմանափակումները վերաբերում են նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի խնամքի տակ գտնվող անձանց, ապա իրավասու ծառայողը սույն կարգով նախատեսված այցելությունների ընթացքում զրուցում է նաև նշված անձանց հետ և զրույցի արդյունքները ներառում համապատասխան արձանագրությունում:

11. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառված անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների խախտման վերաբերյալ ցանկացած աղբյուրից տեղեկություններ ստանալուց հետո իրավասու ծառայողը կամ ծառայողներն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տեղեկությունը ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում մեկնում են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի փաստացի գտնվելու վայր:

12. Անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման պահանջների խախտման դեպքում իրավասու ծառայողը կազմում է խախտման վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ արձանագրություն), որում նշվում են՝

1) անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշմամբ նախատեսված սահմանափակումները.

2) խախտման տեսակը.

3) ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (հերթական համար, երբ և ում կողմից է տրվել), ծննդյան թիվը, սեռը, աշխատանքային գործունեության վերաբերյալ

տեղեկությունները (զբաղեցրած պաշտոնը կամ կատարած աշխատանքը), կոնտակտային տվյալները ( հեռախոսահամար, փաստացի գտնվելու վայր).

4) եթե խախտումն առնչվում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի խնամքի տակ գտնվող անձին, ապա նաև այդ անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (հերթական համար, երբ և ում կողմից է տրվել), ծննդյան թիվը, սեռը, ուսման կամ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները ( ուսումնական հաստատությունը, զբաղեցրած պաշտոնը կամ կատարած աշխատանքը), կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, փաստացի գտնվելու վայր).

5) խախտման նկարագրությունը.

6) խախտումը կատարելու և արձանագրությունը կազմելու օրը, ամիսը, տարեթիվը, վայրը.

7) առկայության դեպքում՝ վկայի անունը, ազգանունը, հայրանունը և բնակության կամ հաշվառման հասցեն.

8) իրավասու ծառայողի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը:

13. Արձանագրությունը ստորագրում են իրավասու ծառայողը և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը: Վերջինիս կողմից ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ կատարվում է նշում ստորագրելուց հրաժարվելու և դրա պատճառների մասին:

14. Եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից խախտվել է Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով կամ 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-8-րդ կետերից մեկով կամ մի քանիսով նախատեսված պահանջը, ապա արձանագրության հիման վրա իրավասու ծառայողը կազմում է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի պահանջներին համապատասխան:

15. Եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից խախտվել է Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կամ 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերից մեկով կամ մի քանիսով նախատեսված պահանջը, ապա սույն կարգի 12-րդ կետով նախատեսված արձանագրությունը կազմելուց հետո իրավասու ծառայողը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անհապաղ գրավոր հայտնում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ստորաբաժանմանը:

16. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների խախտման վերաբերյալ տեղեկությունները տարածքային ենթակայության կարգով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանում: Եթե ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածը փոխում է բնակության վայրը, հսկողությունն իրականացվում է տվյալ տարածքային ստորաբաժանման իրավասու ծառայողի կողմից:

17. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի համաձայնությամբ՝ հսկողություն իրականացնող իրավասու ծառայողն արձանագրության պատճենը գրությամբ անհապաղ ուղարկում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի մշտական բնակության վայրի աջակցության կենտրոն կամ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի նախընտրած այլ աջակցության կենտրոն:

18. Բացառությամբ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով և Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 7-8-րդ կետերով նախատեսված պահանջների՝ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրավասու ծառայողի կողմից չի իրականացվում, եթե ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը, իսկ եթե անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշմամբ նախատեսվել են նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի խնամքի տակ գտնվող անձի վերաբերյալ սահմանափակումներ՝ ապա նաև նշված անձն անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ժամկետի ընթացքում գտնվում են ապաստարանում:

19. Սույն կարգի 18-րդ կետով նախատեսված դեպքում Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով և Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 7-8-րդ կետերով նախատեսված պահանջների նկատմամբ հսկողության նպատակով ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի և նրա խնամքի տակ գտնվող անձի հետ իրավասու ծառայողի հաղորդակցությունն իրականացվում է ապաստարանի հետ համագործակցության միջոցով: